ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՂԵԿԱՎԱՐ

N 01/11937-2022

"08" հուլիս 2022թ.

0047 ՀՀ Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☎ (374-10) 65-05-53, 65-03-05
Էլ. փոստ՝ info@hlib.am

ՈՐՈՇՈՒՄ 08/3

ԹԻՎ 140422-484 ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և հաշվի առնելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեից 2022 թվականի ապրիլի 11-ին ստացված թիվ /70-15/24849-2022 գրությունը, ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնում (այսուհետ նաև՝ Տեսչական մարմին) 2022 թվականի ապրիլի 14-ին հարուցվել է թիվ 140422-484 վարչական վարույթը՝ «ՋԷՅ ԷՅՋ ՆԵՈՆ ՍԻԹԻ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ, 85-րդ և 102-րդ հոդվածների պահանջների պահպանումը պարզելու նպատակով:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածով և հիմք ընդունելով Տեսչական մարմնի ղեկավարի 2022 թվականի ապրիլի 14-ի ՎՎ-0496-Ա հրամանը՝ մասնագետների կողմից 2022 թվականի ապրիլի 15-ից մինչև 2022 թվականի ապրիլի 26-ը ներառյալ Ընկերության ՀՀ, Կոտայքի մարզ, գյուղ Զովունի 1-ին փողոց, 147 և քաղաք Երևան, Հ. Էմինի 43 հասցեներ զննման նպատակով իրականացվել են այցեր:

Զննում իրականացնելու նպատակով մասնագետների կողմից իրականացված այցերի արդյունքում ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի վկայականում նշված ՀՀ, քաղաք

Երևան, Հ. Էմինի փողոց 43, ինչպես նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմված արձանագրությամբ նշված Ընկերության գտնվելու վայր՝ ՀՀ, Կոտայքի մարզ, գյուղ Զովունի, 1-ին փողոց, 147 հասցեներում Ընկերությունը գործունեություն չի իրականացնում, միաժամանակ նշված հասցեներում Ընկերության տնօրեն Սուրեն Գրիգորյանը փաստացի չի բնակվում:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը և 4-րդ մասը, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 755-Լ որոշմամբ հաստատված ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանոնադրության 19-րդ կետի 13-րդ ենթակետը, Տեսչական մարմնի ղեկավարի 2022 թվականի մայիսի 05-ի որոշմամբ վարչական վարույթը կասեցվել է՝ մինչև կասեցումն առաջացնող հանգամանքների վերանալը:

Տեսչական մարմնի ղեկավարի 2022 թվականի հուլիսի 01-ի թիվ 627-Ա հրամանի հիման վրա զննում իրականացնելու նպատակով 2022 թվականի հուլիսի 04-ից մինչև 2022 թվականի հուլիսի 07-ը մասնագետների կողմից իրականացված այցերի արդյունքում պարզվել է, որ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգստրի վկայականում նշված ՀՀ, քաղաք Երևան, Հ. Էմինի փողոց 43, ինչպես նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմված արձանագրությամբ նշված Ընկերության գտնվելու վայր՝ ՀՀ, Կոտայքի մարզ, գյուղ Զովունի, 1-ին փողոց, 147 հասցեներում Ընկերությունը գործունեություն չի իրականացնում և ընկերության տնօրեն Սուրեն Գրիգորյանը փաստացի չի բնակվում:

Վարչական մարմնի կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքում հնարավոր չի եղել ի հայտ բերել վարչական ակտի հասցեատիրոջը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե՝ օրենքի

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ և ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
HEALTH AND LABOR INSPECTION BODY OF THE REPUBLIC OF ARMENIA

0047 ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107

կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումների կամ դրանց կանխման հետ չկապված հարցով իրավիճակի փոփոխման կամ օրենքով նախատեսված այլ հիմքով վերացել է վարչական ակտի ընդունման անհրաժեշտությունը:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 755-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 13-րդ ենթակետը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից 2022 թվականի ապրիլի 14-ին հարուցված թիվ 140422-484 վարչական վարույթը կարճել՝ իրավիճակի փոփոխման հիմքով:

2. Սույն որոշումը ծանուցել «ՋԵՅ ԷՅՋ ՆԵՈՆ ՍԻԹԻ» ՍՊԸ-ի տնօրեն Սուրեն Գրիգորյանին, հասցե՝ Կոտայքի մարզ, գյուղ Զովունի, 1-ին փողոց, 147:

Recoverable Signature

X

ՀԱԿՈԲ ԱՎԱԳՅԱՆ

Signed by: AVAGYAN HAKOB 3912770166

ՀԱԿՈԲ ԱՎԱԳՅԱՆ

Սույն վարչական ակտն ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակիցներին իրազեկելուն հաջորդող օրվանից: Սույն վարչական ակտն ստանալու օրվանից 2 ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին:

Սույն վարչական ակտն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածով սահմանված ժամկետում կարող է բողոքարկվել վարչական դատարան: